

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

18.10.2023 10:50



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 17.10.2023 թվականի թիվ 9/1-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը:

ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրները 2023 թվականի որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը կարող են ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ **2023թ. հոկտեմբերի 18-ից մինչև 2023թ. հոկտեմբերի 24-ը** (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին):

Փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 30-րդ կետում (www.advocates.am, Պալատ -> Որակավորման հանձնաժողով):

Բեռնել ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը

Բեռնել ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդիրների Որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին որոշումը